

### ՏԻՏՂՈՍԱԹԵՐԹ

- Ընթացիկ հաշվետվություն
- Եռամսյակային ֆինանսական հաշվետվություն
- Տարեկան հաշվետվություն

« ԵՐԵՎԱՆԻ ՈՍԿԵՐԶԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆ » բաց բաժնետիրական ընկերություն,  
«ԵՈԳ» ԲԲԸ

թողարկողի ֆիրմային անվանումը (անունը,ազգանունը)  
Բաց բաժնետիրական ընկերություն

կազմակերպական - իրավական ձևը  
ք.Երևան 0023, Արշակունյաց,12 հեռ. 58-66-18, ֆաքս 52-57-13

գտնվելու վայրը,հասցեն, կապի միջոցները(հեռախոս,ֆաքս, էլ-փոստ և այլն)

N 1 09 .02. 2010թ.

հաշվետվության համարն ու ամսաթիվը

տեղաբաշխված արժեթղթերի դասը`	<b>սովորական</b>
արժեթղթերի քանակը`	<b>10.348.896 հատ</b>
արժեթղթերի անվանական արժեքը(արժույթը)`	<b>1000</b>

«Մենք` ստորագրող անձինք, հավաստիացնում ենք,որ հաշվետվությունում ներառվող տեղեկությունները ճշգրիտ և ստույգ են և չեն պարունակում բացթողումներ,որոնք կարող են խեղաթյուրել հաշվետվության ամբողջականությունը»:

ստորագրող անձինք`	<b>գլխ.հաշվապահ</b>		<b>09 .02. 2010թ.</b>
<b>Ազատուհի Մակարյան</b>			
-----	-----	-----	-----
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
-----	-----	-----	-----
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
-----	-----	-----	-----
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)

Ստորագրությունները վավերացնում են (ստորագրությունները վավերացվում են տնօրենների խորհրդի նախագահի կամ գործադիր տնօրենի կամ նման իրավասություն ունեցող այլ անձի կողմից)

<b>Գագիկ Կաֆյան</b>	<b>գլխավոր տնօրեն</b>	<b>09 .02. 2010թ.</b>
-----	-----	-----
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)
		(ամսաթիվ)

**« ԵՐԵՎԱՆԻ ՈՍԿԵՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆ » ԲԲԸ**

2010 թ. արտահերթ ժողով

Հասցե	ք. Երևան 023, Արշակունյաց փ. 12
Հեռախոս	52-53-21,58-66-18
Ֆաքս	52-57-13
Ինտերնետ կայք	<a href="http://www.yeryewei.am">www.yeryewei.am</a>

Սույն թվականի փետրվարի 6 -ին տեղի ունեցավ «Երևանի ոսկերչական գործարան» ԲԲ Ընկերության բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովը:

Ներկայացվում է բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովի կազմակերպման և վարման ժամանակ առաջացած հետևյալ փաստաթղթերը՝

1. Ընկերության տնօրենների խորհրդի 2010թ. կայացած նիստի արձանագրությունը  
( N 1Խ-2010 առ 15.01.2010թ. ):

2. Արտահերթ ընդհանուր ժողովի արձանագրությունը (N 1Ժ-2010, 6.02.2010թ.):

3. Հաշվիչ հանձնաժողովի N 1,2 և N 3 արձանագրությունները:

4. Բաժնետերերին բաժանված հետևյալ նյութերը՝

- ժողովի օրակարգը;
- Քվեաթերթիկի օրինակը:
- Տնօրենների խորհրդի 15.01.2010թ. N 1Խ -2010 կայացած նիստի արձանագրությունը:

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 1Խ-10

«ԵՈԳ» ԲԲԸ տնօրենների խորհրդի նիստի

ք. Երևան

15.01.2010

Ներկա են՝ Խորհրդի նախագահ  
Ներսես Երիցյան ԶՅ Էկոնոմիկայի նախարար  
Խորհրդի անդամներ  
Էմիլ Գրիգորյան ԵՈԳ -1 «Գնոմոն» ԲԲԸ Գլխավոր Տնօրեն  
Սեյրան Սուվարյան Երևանի Պետական Համալսարանի դոցենտ  
Գագիկ Աղաջանյան «ԲՏԱ ԲԱՆԿ» ՓԲԸ Վարչության պետ  
Գարիկ Հովհաննիսյան «ԵՈԳ» ԲԲԸ Արտադրության պետ

Օրակարգ՝

1.« ԵՈԳ»ԲԲԸ բաժնետերերի արտահերթ ժողովի հրավիրման հարցը

Լսեցին՝

1. Է.Գրիգորյանին . տեղեկացրեց . որ 25.12.2009թ. հայտարարվել է մրցույթ «ԵՈԳ» ԲԲԸ 2009թ. ֆինանսա-տնտեսական գործունեության աուդիտն անցկացնող մասնագիտացված աուդիտորական ընկերության ընտրության նպատակով: Մրցույթի ժամկետը սահմանված է 25.12.2009 թ. մինչև 25.01.2010 թ.: Ստացված հայտերը ուսումնասիրելու է, վերլուծելու է և համապատասխան եզրակացություն է տալու « ԵՈԳ» ԲԲԸ տնօրենների խորհրդի նախորդ նիստում հաստատված աուդիտի կոմիտեն: Այդ եզրակացության հիման վրա էլ խորհուրդը Ընկերության բաժնետերերի ժողովի հաստատմանը կներկայացնի համապատասխան աուդիտորական կազմակերպությունը:

Հաջորդ հարցը, որը նույնպես պետք է ներկայացվի Ընկերության բաժնետերերի ժողովի հաստատմանը ` « ԵՈԳ»ԲԲԸ տնօրենների խորհրդի անդամների վարձատրության ձևը և չափը:

Է.Գրիգորյանը առաջարկեց հրավիրել « ԵՈԳ» ԲԲԸ բաժնետերերի արտահերթ ժողով 2010թ. փետրվարի 06-ին, հետևյալ օրակարգով՝

1. «ԵՈԳ»ԲԲԸ տնօրենների խորհրդի անդամների վարձատրության ձևի և չափի հաստատում
2. «ԵՈԳ» ԲԲԸ 2009թ. ֆինանսա-տնտեսական գործունեության աուդիտը անցկացնող մասնագիտացված աուդիտորական ընկերության հաստատում

## Որոշեցին՝

1. Հրավիրել «ԵՈԳ» ԲԲԸ բաժնետերերի արտահերթ ժողով 2010 թ. փետրվարի 06-ին ժամը 12-00:

2. Հաստատել « ԵՈԳ» ԲԲԸ բաժնետերերի արտահերթ ժողով ի հետևյալ օրակարգը՝

- «ԵՈԳ» ԲԲԸ տնօրենների խորհրդի անդամների վարձատրության ձևի և չափի հաստատում

- «ԵՈԳ» ԲԲԸ 2009թ. ֆինանսա-տնտեսական գործունեության աուդիտը անցկացնող մասնագիտացված աուդիտորական ընկերության հաստատում

Ներսես Երիցյան

Էմիլ Գրիգորյան

Սեյրան Սուվարյան

Գագիկ Աղաջանյան

Գարիկ Հովհաննիսյան

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 1Ժ -10

«Երևանի ոսկերչական գործարան» բաց բաժնետիրական ընկերության բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովի, կայացած 2010թ. փետրվարի 6-ին, ժամը 12<sup>00</sup>.

**Մասնակցեցին`** Ընկերության 10.348.896 տեղաբաշխված բաժնետոմսերի սեփականատերերից թվով 8.303.068 բաժնետոմսերի սեփականատերեր կամ նրանց լիազոր ներկայացուցիչներ (80,23%), այդ թվում Ընկերության պետական բաժնեմասի ներկայացուցիչներ` Սեյրան Սուվարյանը և Գագիկ Աղաջանյանը:

Ժողովը նախագահում էր Ընկերության Խորհրդի անդամ Է.Գրիգորյանը, քարտուղար Օ. Ամիրյանը հաստատվեց բաց քվեարկությամբ միաձայն:

Միաձայն ընտրվեց նաև հաշվիչ հանձնաժողովը, բաղկացած երեք հոգուց` Զովսեփյան Խանում, Ամիրյան Օֆելյա և Մակարյան Ազատուհի:

Խորհրդի անդամ Գարիկ Զովհաննիսյանը առաջարկեց ժողովի օրակարգում ներառել ևս երկու հարց`

- Ընկերության նոր ընտրվելիք վերստուգող հանձնաժողովի անդամների վարձատրության չափի հաստատում:
- Ընկերության աշխատանքային կոլեկտիվի և ադմինիստրացիայի միջև կնքվող 2010-2013թթ. կոլեկտիվ պայմանագրի հաստատումը:

Բաց քվեարկությամբ ժողովը միաձայն ընդունեց Գ.Զովհաննիսյանի առաջարկը: Միաձայն հաստատվեց ժողովի հետևյալ օրակարգը:

### Օրակարգ.

1. ԵՈԳ ԲԲԸ տնօրենների Խորհրդի անդամների վարձատրության ձևի և չափի հաստատում:
2. ԵՈԳ ԲԲԸ 2009թ. ֆինանսատնտեսական գործունեության աուդիտ անցկացնող ընկերության հաստատում, համաձայն հայտարարված մրցույթի արդյունքների:
3. Ընկերության նոր ընտրվելիք վերստուգող հանձնաժողովի անդամների վարձատրության չափը:
4. Ընկերության աշխատանքային կոլեկտիվի և ադմինիստրացիայի միջև կնքվող 2010-2013թթ. կոլեկտիվ պայմանագրի հաստատումը:

Օրակարգի առաջին հարցով ելույթ ունեցավ պրն. Է.Գրիգորյանը: Նա նշեց, որ Ընկերության 24.10.2009թ. բաժնետերերի արտահերթ ժողովում հաստատված

ընկերության խորհուրդը ակտիվ աշխատանք է ծավալել ընկերության գործունեության վերլուծության, հետագա զարգացման ուղղությունների մշակման վերաբերյալ: Նպատակն է ապահովել ընկերության շահութաբեր աշխատանքը և զարգացման հեռանկարները:

Առաջարկվում է սահմանել խորհրդի անդամների համար ամենամսյա պարզևատրում հետևյալ չափերով՝ պետական բաժնեմասը ներկայացնող խորհրդի անդամների համար 300.000դրամ յուրաքանչյուրին և 100.000դրամ աշխատանքային կոլեկտիվը ներկայացնող խորհրդի անդամների համար՝ յուրաքանչյուրին:

Ուզում եմ նշել, որ խորհրդի նախագահ ՀՀ էկոնոմիկայի նախարար Ներսես Երիցյանը իր պարտականությունները որոշել է կատարել անվճար, նշում եմ, որ ես նույնպես խորհրդի անդամի պարտականությունները կատարելու եմ անվճար: :

Պարզևատրումների վճարները սկսել 2009թ. նոյեմբերի 1-ից:

Խնդրում եմ քվեաթերթիկներում կատարել Ձեր նշումները:

Կողմ՝ 8.303.068                      Դեմ՝ 0                      Ձեռնպահ՝ 0

Քվեարկությամբ առաջարկությունը ընդունվել և հաստատվել է:

Օրակարգի երկրորդ հարցով ելույթ ունեցավ խորհրդի անդամ, Ընկերության աուդիտի կոմիտեի անդամ պրն. Գագիկ Աղաջանյանը: Նա տեղեկացրեց, որ «ԵՈԳ» ԲԲԸ 2009թ. ֆինանսատնտեսական գործունեության աուդիտը անցկացնող մասնագիտացված աուդիտորական ընկերության ընտրության նպատակով հայտարարված մրցույթի ժամկետում՝ 25.12.2009թ մինչև 25.01.2010թ. ստացվել են հայտեր հետևյալ կազմակերպություններից՝

Grant Thornton Amyot  
Ameria  
Հայաուդիտ  
KPMG  
Baker Tilly Armenia

Ընկերության աուդիտի կոմիտեն անցկացնելով ներկայացված հայտերի ուսումնասիրությունը առաջարկել է տնօրենների խորհրդին Ընկերության բաժնետերերի արտահերթ ժողովի հաստատմանը ներկայացնել - «Grant Thornton Amyot», որպես «ԵՈԳ» ԲԲԸ 2009թ. ֆինանսատնտեսական գործունեության աուդիտ իրականացնող ընկերություն:

Այն ներկայցվում է ձեր քննարկմանը և որոշման հաստատման համար:

Կողմ՝ 8.303.068                      Դեմ՝ 0                      Ձեռնպահ՝ 0

Քվեարկությամբ առաջարկությունը ընդունվել և հաստատվել է:

Օրակարգի 3-րդ հարցով ելույթ ունեցավ խորհրդի անդամ Գարիկ Հովհաննիսյանը: Նա առաջարկեց սահմանել ընկերության նոր ընտրվելիք վերստուգող հանձնաժողովի անդամների վարձատրության հետևյալ չափերը՝





## Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն N 1

« Երևանի ոսկերչական գործարան» Բաց Բաժնետիրական Ընկերության  
 Բաժնետերերի ընդհանուր արտահերթ 6.02.10թ. ժողովի կողմից  
 ընտրված հաշվիչ հանձնաժողովի նիստի

Ժողովին մասնակցում էին 11 բաժնետերեր կամ նրանց լիազոր  
 ներկայացուցիչներ, որոնք բաժնետոմսերի ընդհանուր քանակությունից  
 / 10 348 896 հատ / հանդիսանում են 8.303.068. բաժնետոմսի սեփականատեր,  
 կամ ժողովին ներկա էին 80,23% ձայնի իրավունք ունեցող բաժնետերեր, ինչն  
 ապահովում է քվորումը:

Հանձնաժողովի անդամներ՝

Խ. Հովսեփյան

Ա. Մակարյան

Օ. Ամիրյան

## Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն N 2

**« Երևանի ոսկերչական գործարան» Բաց Բաժնետիրական Ընկերության  
բաժնետերերի ընդհանուր արտահերթ 06.02.10թ. ժողովի կողմից  
ընտրված հաշվիչ հանձնաժողովի նիստի**

Նախօրոք բաժանված քվեաթերթիկների հաշվառումը ցույց տվեց հետևյալ արդյունքները՝ (առկա 8.303.068.ծայների քանակից)

**1. «ԵՈԳ» ԲԲԸ տնօրենների խորհրդի անդամների վարձատրության ձևի և չափի հաստատում:**

կողմ - 8.303.068                      դեմ - 0                      ձեռնպահ - 0

**2. «ԵՈԳ» ԲԲԸ 2009թ. ֆինանսա-տնտեսական գործունեության աուդիտ անցկացնող ընկերության հաստատում, համաձայն հայտարարված մրցույթի արդյունքների:**

կողմ - 8.303.068                      դեմ - 0                      ձեռնպահ - 0

Ընկերության 2009թվականի ֆինանսա-տնտեսական գործունեության աուդիտ անցկացնող կազմակերպության ընտրության հարցով հայտարարված մրցույթի ժամկետում 25.12.2009թ. մինչև 25.01.2010թ., որի արդյունքով ընտրվել է աուդիտ անցկացնող «Grant Thornton Amyot» ընկերությունը:

**3. Ընկերության նոր ընտրվելիք վերստուգող հանձնաժողովի անդամների վարձատրության չափը:**

կողմ - 8.303.068                      դեմ - 0                      ձեռնպահ - 0

Ընկերության նոր ընտրվելիք վերստուգող հանձնաժողովի անդամների վարձատրության ռափը հաստատվել է:

**4. Ընկերության աշխատանքային կուլեկտիվի և ադմինիստրացիայի միջև կնքվող 2010-2012թթ. կուլեկտիվ պայմանագրի հաստատումը:**

կողմ - 8.303.068                      դեմ - 0                      ձեռնպահ - 0

2010-2013թթ. կուլեկտիվ պայմանագիրը հաստատվել է:

Հանձնաժողովի անդամներ՝

Խ. Հովսեփյան

Ա. Մակարյան

Օ. Ամիրյան

### Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն N 3

« Երևանի ոսկերչական գործարան» Բաց Բաժնետիրական Ընկերության  
 Բաժնետերերի ընդհանուր արտահերթ 06.02.10թ. Ժողովի կողմից  
 ընտրված հաշվիչ հանձնաժողովի նիստի

Ժողովին մասնակցում էին 11 բաժնետերեր կամ նրանց լիազոր  
 ներկայացուցիչներ, որոնք բաժնետոմսերի ընդհանուր քանակությունից  
 / 10 348 896 հատ / հանդիսանում են 8.303.068 բաժնետոմսի սեփականատեր,  
 կամ ժողովին ներկա էին 80,23 % ձայնի իրավունք ունեցող բաժնետերեր, ինչն  
 ապահովում է քվորումը:

Նախօրոք բաժանված քվեաթերթիկների հաշվառումը ցույց տվեց, որ  
 օրակարգի հարցերը բաժնետերերը հաստատել են միաձայն՝ 8.303.068 .ձայնով:

Հանձնաժողովի անդամներ՝

Խ. Հովսեփյան

Ա. Մակարյան

Օ. Ամիրյան

**ՀԱՍՏԱՏՎԵԼ Է**  
«Երևանի ոսկերչական գործարան»  
բաց բաժնետիրական ընկերության  
տնօրենների խորհրդի կողմից  
արձանագրության համարը 1Խ-10  
15.01.2010թ

**«Երևանի ոսկերչական գործարան» բաց բաժնետիրական ընկերության  
բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովի**

**Օ Ր Ա Կ Ա Ր Գ**

**06 փետրվարի 2010թ.**

1. ԵՈԳ ԲԲԸ տնօրենների խորհրդի անդամների վարձատրության ձևի և չափի հաստատում:
2. ԵՈԳ ԲԲԸ 2009թ. ֆինանսատնտեսական գործունեության աուդիտ անցկացնող ընկերության հաստատում, համաձայն հայտարարված մրցույթի արդյունքների:
3. Ընկերության նոր ընտրվելիք վերստուգող հանձնաժողովի անդամների վարձատրության չափը:
4. Ընկերության աշխատանքային կոլեկտիվի և ադմինիստրացիայի միջև կնքվող 2010- 2013թթ. կոլեկտիվ պայմանագրի հաստատումը:

« Երևանի ոսկերչական գործարան » Բ Բ Ը

N	Անուն, ազգանուն	Ծննդյան թիվը	Քաղ.	Մասնագիտ.	Պաշտոնը	Սով.բաժնետոմս. «ԵՈԳ» ԲԲԸ
<b>Տնօրենների խորհրդի անդամների կազմը</b>						
1.	Ներսես Երիցյան	1971	ՀՀ	տնտեսագետ-	ՀՀ էկոնոմիկայի նախարար	չունի
2.	Էմիլ Գրիգորյան	1938	ՀՀ	ճարտարագետ	ԵՈԳ -1 «ԳՆՈՄՈՆ» ԲԲԸ գլխավոր տնօրեն	5894
3.	Գարիկ Հովհաննիսյան	1970	ՀՀ	ինժ-մեխանիկ	Տնօրեն արտադրության գծով	չունի
4.	Գագիկ Աղաջանյան	1971	ՀՀ	տնտեսագետ	ԵՏԱԲանկ Ռիսկերի ծառայության պետ	չունի
5.	Սեյրան Սուվարյան	1960	ՀՀ	տնտեսագետ	Երևանի Պետական Համալսարան	չունի

**Ք Վ Ե Ա Թ Ե Ր Թ Ի Կ**

«Երևանի ոսկերչական գործարան» Բաց Բաժնետիրական Ընկերություն.

----- 6 փետրվարի 2010թ  
բաժնետերերի /լիազորված անձի/ անուն, ազգանուն      ձայների/բաժնետոմսերի/թիվը

**ՀԱՐՑ 1.** «ԵՈԳ» ԲԲԸ տնօրենների խորհրդի անդամների վարձատրության ձևի և չափի հաստատում:

ԿՈՂՄ                       ԴԵՄ                       ՁԵՌՆՊԱՀ

**ՀԱՐՑ 2.** «ԵՈԳ» ԲԲԸ 2009թ. ֆինանսա-տնտեսական գործունեության աուդիտ անցկացնող ընկերության հաստատում, համաձայն հայտարարված մրցույթի արդյունքների :

ԿՈՂՄ                       ԴԵՄ                       ՁԵՌՆՊԱՀ

**ՀԱՐՑ 3.** . Ընկերության նոր ընտրվելիք վերստուգող հանձնաժողովի անդամների վարձատրության չափի հաստատում:

ԿՈՂՄ                       ԴԵՄ                       ՁԵՌՆՊԱՀ

**ՀԱՐՑ 4.** Ընկերության աշխատանքային կոլեկտիվի և ադմինիստրացիայի միջև կնքվող 2010-2013թթ. կոլեկտիվ պայմանագրի հաստատումը:

ԿՈՂՄ                       ԴԵՄ                       ՁԵՌՆՊԱՀ

ԳՈՒՄԱՐԱՅԻՆ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՁԱՅՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ ..... x 5 = .....

## Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

### «Երևանի ոսկերչական գործարան» Բաց բաժնետիրական ընկերություն

2010թ. փետրվարի 6 -ին ժամը 12 -ին կայանալու է Երևանի ոսկերչական գործարան ԲԲԸ բաժնետերերի արտահերթ ժողով:

Ժողովի օրակարգը՝

1. ԵՈԳ ԲԲԸ տնօրենների խորհրդի անդամների վարձատրության ձևի և չափի հաստատում:
2. ԵՈԳ ԲԲԸ 2009թ. ֆինանսատնտեսական գործունեության աուդիտ անցկացնող ընկերության հաստատում, համաձայն հայտարարված մրցույթի արդյունքների:

Ժողովը կկայանա ք.Երևան, Արշակունյաց,12. հասցեում:

